ՐԱՖՖՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Ռաֆֆին ծնվել է Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում Միրզաբեկի նահապետական գերդաստանում: 1842 թ. սկզբին, երբ դեռ նոր էր բոլորում այդ ընտանիքում ծնված՝ Միրզաբեկի և Զեյրանուհի խանումի ավագ որդու՝ Ռաֆֆու ծննդյան տասը տարին, ծնողները սկսում են մտահոգվել նրա կրթության հարցով: Քանի որ ընտանիքում պահպանված էր մի մտայնություն, ըստ որի Հոգեգալուստի օրը «երկնային լույսը պայծառացնում է մարգկանց հոգիները», ուստի ընտանիքի մայրը այդ օրը պատանի Հակոբին տանում է իրենց թաղի Մսեր անունով քահանայի մոտ և հանձնում նրան, որ «գիր կարդալ սովորի և լավ մարդ դառնա»: «Ես մինչև այսօր,– դրում էր Ռաֆֆին հասուն տարիքում,– չեմ մոռացել այն խոսքերը, երբ մայրս ինձ վարժապետին հանձնելու ժամանակ ասաց. «Տեր հայր, ծառա լինեմ սուրբ աջիդ, որդիս քեզ համար ղուլ (ստրուկ) եմ բերել. միսը քեզ, ոսկորը ինձ: Ինչ ուզում ես արա, միայն թե երեխես մի բան սովորի[1]*:*

Մեր գպրոցը,– շարունակում է Ռաֆֆին,– տեր Հոր ավելորդ սենյակներից մեկն էր, անասունների ախոռին շատ մոտ, համարյա կպած: Այդ նեղ ու խեղդված խուցի մեջ լցված էին թվով մինչև քսան աշակերտ: Բացի աշակերտներից, այստեղ կապված էին տեր Հոր նորածին հորթերից երեքը: Ջմեռը շատ լավ էր այստեղ, թեև վառելիք չունեինք, բայց ախոռից վարժարանի մեջ ջերմ գոլը մառախուղի պես քուլա-քուլա ներս էր թափվում և մեր դասարանը դառնում էր տաք, որպես բաղնիք»[2]*: «Մեր դասարանը,– շարունակում է Ռաֆֆին,– բոլորովին մերկ էր. նստարան, աթոռ, սեղան կոչված բաները այնտեղ չկային: Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնավ հատակի վրա, որը պատած էր հասիրով: Միակ առարկան, որ հիշեցնում էր թե այդ մթին, դերեզմանի պես խոնավ սենյակը դպրոց է, ֆալախկան էր և մի խուրձ դալար ճիպոտ նրա մոտ դրված»*[3]*:*

Վարժապետը առաջին անգամ Հակոբին տալիս է սովորելու Այբբենարանը[4]*. «Կարծես այս րոպեիս էլ իմ աչքի առջևն է այն փոքրիկ տետրակը տպված խոշոր տառերով, նրա ճակատին նկարած էր մի մեծ խաչ, որի ներքև կային այս խոսքերը. «Խա՛չ, օդնյա ինձ»: Մի քանի ամբողջ ամիսներ,– շարունակում է Ռաֆֆին,– երեսս խաչակնքելով կրկնում էի այդ ե-*

---

1 *Մ ե լ [ի ք ղ ա գ ե]. Մեր լուսավորիչները (Հիշողություն մանկական կյանքից).– «Մշակ», 1875, նոյեմբերի 13, № 45, էջ 1-3:*

2 *Նույն տեղում:*

3 *Նույն տեղում:*

4 *Նույն տեղում: Մատենագիտական ցանկերի միջոցով կատարված որոնումների ընթացքում մեզ չհաջողվեց հայտնաբերել ու պարզել Ռաֆֆու օգտագործած Այբբենարանի հեղինակին, հրատարակության տեղն ու թվականը:*

րեք բառը: Վարժապետս ասում էր՝ եթե ամեն դասի սկզբում խաչից օգնություն չխնդրես, ոչինչ չես կարող սովորել:

Վաղ առավոտից սկսվում էր դասատվությունը, աշակերտները հերթով մոտենում էին, վարժապետի աջը համբուրում, չոքում էին նրա առջև, դասագիրքը դնելով գրակալի վրա, սկսում էին «Դաս ասել»: Ամեն սխալի համար յուրաքանչյուրը ընդունում էր մի սաստիկ հարված իր ափի մեջ, իսկ եթե դասը սերտած չէր, նրա համար պատրաստ էր այն անիծված ֆալախկան: Վաղ առավոտից մենք պետք է դասարան գայինք բոլորովին անոթի, առանց մի պատառ հաց անգամ բերան դնելու: Վարժապետն ասում էր. «Կուշտ փորով չի կարելի դաս սովորել, երբ մարդը մի բան ուտում է, խելքը պակասում է: Եվ այսպես մինչև կեսօր մենք պարապում էինք բոլորովին սոված»[5]:

Վարժապետը միշտ Հակոբին էր հանձնարարում տնից եկեղեցի տանել այն մեծ գիրքը, որին «Այսմավուրք» էին ասում: «Թե ինչ էր գրած դրա մեջ,– պատմում է Ռաֆֆին,– ես չգիտեի, բայց շատ անգամ գիրքը տանելու ժամանակ մտածում էի. «Ախ աստված ջան, ինչ կլինի, որ այդ գրքի բոլոր գրվածները իմ գլխում լցնես», հետո ինձ ու ինձ ծիծաղում էի. «Լավ, ասում էի, իմ պստիկ գլուխը ո՞նց կարող է այս ամեն բաները իր մեջ տանել»[6]:

Մսեր վարժապետը իր աշակերտներին տառաճանաչ դարձնելուց հետո սովորեցնում է ութ կանոն «Սաղմոս» քաղել, ապա «Ժամագիրք», «Ավետարան» ու խրթնալեզու «Նարեկը» կարդալ: Ցանկացողներին սովորեցնում էր նաև արհեստ՝ քերականություն:

Եթե Մսեր վարժապետի «գիտելիքների» վրա ավելացնենք նրա կողքին շարված դալար ճիպոտներն ու անկյունում դրված ահ ազդող ֆալախկան, ապա պարզ կդառնա, թե ինչ կարող էր սովորել ուսումնատենչ Հակոբը տեր Թեոդիկ կերպարի նախատիպը հանդիսացող այդ վանեցի վարժապետի դպրոցում:

Հակոբի դպրոցական ու պատանեկան տարիների մասին մեզ հասած փաստացի տեղեկությունները թեև սակավ են ու կցկտուր, սակայն երիտասարդական շրջանում նրա դրած ու հասուն տարիքում վերամշակած «Սառա» խորագրով պոեմում բերված «փաստերը», նկարագրված դեպքերն ու կատարած խորհրդածությունները անուղղակի տեղեկություններ են պարունակում այդ բացը լրացնելու գործում: Այս պոեմում ղգալի տեղ է հատկացված ռաֆֆիագիտության համար ցարդ անհայտ մնացած դեպքերին ու կենսագրական փաստերին: Հուզիչ ու հանդավոր տողերով Ռաֆֆին նկարագրում է իր խենթ մանկությունը, գյուղի ընկուզենին, խոտի մարագը, բաց երկնքի տակ, կտուրին պառկած, մանկական հրճվանքը, աստղերի խաղը, լուսնի հեքիաթը, իրենց դպրոցը, Սառայի սերը, իր տվայտանքը, թախիծով, կարոտով ու ափսոսանքով լեցուն պատանեկությունը:

Ահա՛ դպրոցը,– դրում է նա,–
Փափուկ հասակիս սպանդանոցը:

---

5 *Նույն տեղում:*

6 *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 1985, էջ 354:*

Այդ դպրոցի մեջ գյուղի տիրացուն
Ուսուցանում էր ինձ «Խոնարհեսցուն»,
Գիշերը քնելիս «Եկեսցե» կարդալ
Եվ վաղ առավոտ միշտ ժամը երթալ:

Ահա՛ այն ծառը... թշվառ ուռենի.
Քեզ չեմ մոռացել փտած ծերունի,
Դու տալիս էիր իմ վարժապետին
Միշտ դալար ճյուղեր ինձ պատժելիս:

Մսեր վարժապետի տգիտության հետևանքով թերի մնացած կրթության պակասը Հակոբը լրացնում էր շրջապատից քաղած հարուստ ու բազմարնույթ տեղեկություններով: Իրենց տանը հյուրընկալվող օտարականների պատմած զրույցները, Փայաջուկի գունագեղ բնությունը, Սոլա գետակի դեղատեսիլ ափերը, Թավշյա մարգագետինները, Դերիկ և Առուալ լեռներից իջնող խոխոջուն վտակները և, վերջապես, Սոնա տատի հեքիաթներն ու թափառական գուսանների խաղերը դառնում են յուրատեսակ դպրոց և լրացնում պատանեկությունից երիտասարդություն գնացող Հակոբի գլուխը՝ խոհերով, իսկ մատաղ սիրտը՝ հույզերով, գառն ապրումներով ու գեղեցիկ զգացումներով:

Դպրոցական տարիքում Հակոբի երիտասարդականացվող նախասիրությունների վրա ավելանում է շրջապատի հանդեպ ընդգծված հետաքրքրասիրությունը և երիտասարդությանը հատուկ համարձակությունը: Այդ տարիքում նա մեծ հակում է հանդես բերում նաև զենքերի հանդեպ: Քեռիների տանը գտնված ժամանակ Հակոբը գոգունի մտնում է նրանց զինեգործական արհեստանոցը, վերցնում է այս ու այն զենքը և խնդրում, որ նվիրեն իրեն: Նա առանց այլևայլության անմիջապես մտերմություն է հաստատում այն հյուրերի հետ, որոնք իրենց վրա զենք էին կրում: Հակոբը ոչ միայն մեծ հետաքրքրությամբ լսում էր այդ մարգկանց արկածախառն պատմությունները, այլև իր անսպառ հարցերով մասնակցում էր նրանց խոսակցությանը: Ունենալով նկարելու շնորհք, նա ոչ միայն մասնակցում է մեծերի զրույցներին, դատողություններ անում, այլև խզբզելով ծաղրանկարում է իրեն դուր չեկած խոսակիցներին ու համարձակորեն ցույց տալիս բոլորին:

Հակոբի հայրը՝ Միրզաբեկը, սրտանց ուրախանում էր, որ իր որդին մարդամեջ է մտնում, կարողանում է արդարը զանազանել անարդարից: Հուշագրողները նշում են, որ Միրզաբեկը հրճվում էր Հակոբի դիտելիքների պաշարով: Նա անսքող հպարտությամբ հաճախ կրկնում էր, որ իր «Հակոբի հաբը ողջ Սալմաստում չկա»:

Հակոբի ուսումնառության վերջին տարիներում՝ մանկությունից-երիտասարդություն անցնող շրջափուլը կազմավորվում է Փայաջուկի սոցիալական հակասություններով հարուստ միջավայրում, համագյուղացիների ու դրացիների տները ներխուժող ֆերաշների խժդժությունների, վայրագ կամայականությունների, անարդար ու քսու հարաբերություններ միջավայրում: Մի մթնոլորտ, որը նրա վառ երևակայության մեջ գրոշ-

մում է գյուղական կյանքի հարուստ ու բազմագույն պատկերներ: Պատկերներ... Դեպքեր ու դրվագներ, միախառնված ավանդաղրույցների, հավատալիքների ու ծեսերի հետ, որոնք շերտ առ շերտ ամբարվում են երիտասարդ ուսումնատենչ Հակոբի տաղանդավոր հոգում և հիշողության ծալքերում:

Կարող է թվալ, թե այս ամենը կապ չունի Հակոբի ստացած կրթության հետ, սակայն ուսումնասիրության հինգ տարիների ընթացքում միջավայրի ու շրջապատի հետ ունեցած աղերսները խորը հետք են թողնում երիտասարդ Ռաֆֆու գիտելիքների կազմավորման ու ամբարման վրա և լրացնում են այն պակասը, որը նա, իբրև աշակերտ, պետք է ստանար Մսեր վարժապետից:

Հարկ է նշել, որ այս ձեռքբերումները Հակոբի համար դառնում են յուրատեսակ գպրոց նրա կրթական կյանքում:

Հակոբ Միրզայանը Մսեր վարժապետի առաջադեմ աշակերտներից մեկն էր, ամենից ընդունակը, պարտաճանաչն ու իմաստասեր, այսուհանդերձ նա ևս առիթ է ունենում ճաշակելու իր վարժապետի «հանգիմանական խրատների քաղցրությունը»: Լինելով միաժամանակ ըմբոստ ու արդարամիտ՝ ընկերների գանահարության ժամանակ բողոքում է Մսեր վարժապետի դաժան խստությունների ու կամայականությունների դեմ: «Դու ինչո՞ւ ես խառնվում, Հակոբ,– ասում է վարժապետը,– երբ ես իմ աշակերտներին ապտակում եմ»[7]: Նման դեպքում բնավ կարևոր չէր, թե ում էր ապտակում վարժապետը, եթե նա անիրավացի էր իր վարմունքի մեջ, Հակոբը մի կողմ քաշվել կամ լռել չէր կարող, ուստի հաճախ բողոքում ու հակադրվում էր Մսեր վարժապետին:

Շուրջ հինգ տարի Հակոբը սովորում է այս գպրոցում: Առավոտից մինչև կեսօր Սաղմոս էին քաղում աշակերտները ու թեև անգիր դիտեին «Ժամագրքից» բազմաթիվ գլուխներ, սակայն գրեթե ոչինչ չէին հասկանում իրենց սովորածից: «Ես հիմար տղա չէի,– պատմում է Ռաֆֆին հասուն տարիքում,– ես շատ սրամիտ էի, երբ տատս մի հեքիաթ էր պատմում, ես միանգամից բոլորը սովորում էի, երբ մեր քաղաքում աչուղ էր գալիս, երգեր էր երգում, վեպ էր պատմում, ես իսկույն սովորում էի... Տատիս հեքիաթը, աչուղի երգը ես հասկանում էի, դրա համար էլ շուտ էի սովորում, բայց վարժապետիս դաս տված բաներից ոչինչ չէի հասկանում, ինձ երևում էր որպես թե դրանք հայերեն չէին»[8]:

Ժամանակ անց գգալով, որ այլևս ոչինչ չունի սովորելիք Մսեր վարժապետից, Հակոբը թողնում և դուրս է գալիս դպրոցից: Այս շրջանում նա արդեն հրաժեշտ էր տվել իր ուրախ ու անհոգ պատանեկությանը և դարձել էր լրջախոհ, թողել էր առօրեական դվարճությունները ու ամփոփվել էր ինքն իր մեջ: Նա գրեթե չէր հանդիպում իր խաղընկերներին, աղատ ժամերին միայնակ շրջում էր հին ավերակների մեջ ու աղատ դաշտերում: Սիրում էր առանձնանալ «գերեզմանատան մարգաշատ անդորրում», ուր նստելով քարին՝ մտածում էր ու թախծում:

---

7 Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում. Երևան, 1986, էջ 79:

8 Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու. հ. V, էջ 361:

Ռաֆֆու հայրը՝ Մելիք Միրզաբեկը, թեև դպրոց չէր գնացել, սակայն բարձր էր գնահատում կրթության հարգը: Առևտրական գործերի բերումով հաճախակի լինելով Թիֆլիսում և ծանոթանալով հայկական ու ռուսական դպրոցների դրվածքին, նա ո՛չ միայն դրական կարծիք էր կազմել, այլև այնքան էր ոգևորված կրթության գաղափարով, որ ծրագրում էր Թիֆլիսի օրինակով դպրոցներ բանալ Սալմաստի հայկական գյուղերում: Տեսնելով, որ իր ավագ որդու՝ «Հակոբի մեջ մի մշտավառ կրակ կա դեպի ուսումն ու կրթությունը» և իմանալով, որ նա այլևս ոչինչ չունի սովորելիք իրենց ծխական վարժապետից և թողել է դպրոցը, դիմում է նրան. «Հակոբ,— ասում է նա,— մեր այս Փայաջուկի դպրոցից բան չի դուրս դա, արի քեզ հետս Թիֆլիս տանեմ, այնտեղ լավ դպրոցներ կան, թե՛ լավ հայերեն կսովորես և թե՛ ռուսերեն»[9]:

Երիտասարդ Հակոբը, որ իրենց տանը հյուրընկալվող մարդկանց միջոցով բավականին տեղեկություններ ուներ Թիֆլիսի դպրոցների մասին, հրճվանքով է ընդունում հոր առաջարկը, և ինչպես պատմում է հուշագիր Ավագ Խան-Ավթանդիլյանը, նրա «օձիքը այլևս բաց չի թողնում»[10]: Այս խոսակցությունից մի որոշ ժամանակ անց, 1847 թ. ամռանը, Թիֆլիսում գտնվող Մելիք Միրզաբեկի հանձնարարությամբ, ազգականներից մեկի ուղեկցությամբ տասնվեցամյա Հակոբը դուրս է գալիս իրենց գյուղից և Թավրիզի, Նախիջևանի ու Երևանի վրայով ուղևորվում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում կրթություն ստանալու համար: Այդ ուղևորությունը Փայաջուկից մինչև Թավրիզ Ռաֆֆին վիպական դրվագների զուգակցությամբ նկարագրել է իր «Խաչագողի հիշատակարանը» վեպի «Պանդխտություն», «Կեղծ Հաջին» և «Փոքրիկ մաքսանենգը» գլուխների մեջ: Եթե ընթերցողին հաջողվի այդ պատումների միջից առանձնացնել վիպական դրվագները՝ Քավոր Պետրոսի կեղծ հաջի ձևանալը, նրանց ծպտյալ փախուստը, խաչագողության հետ կապված մյուս մանրամասները, ապա մնացածի մեջ դժվար չէ հայտնաբերել կրթության նպատակով Փայաջուկից Թիֆլիս մեկնող Հակոբի և նրա ազգականի ուղևորության նկարագրությունը:

Հիշյալ փաստարկման մեջ մեզ զբաղեցնողը Թավրիզում նրանց ծավալած գործողություններն են՝ այցելությունը հոգևոր Առաջնորդարան, հանդիպումը հյուպատոսարանում անցագրի իրավունք ստանալու համար: Ընդ որում, երբ փաստական է դառնում «Խաչագողի հիշատակարանում» նկարագրված գործողության և ուղևորության կապը, մենք հնարավորություն ենք ստանում շարունակվող դեպքերի նկարագրության մեջ ի հայտ բերել տեղեկություն Թավրիզում անցագիր ստանալու կարգի վերաբերյալ: Պարսկա-ռուսական սահմանում մաքսատնից անցնող անձը պետք է ունենար համապատասխան անցաթուղթ: Այդ իրավունքը ձեռք բերելու համար Հակոբը և իր ուղեկիցը իրենց անվան ու ազգանվան ներքո պետք է նշեին «տարիքը, հասակը, դեմքը», ապա անցագրի կապալա-

9 Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, էջ 80:
10 Նույն տեղում:

ռու թեսքիրաջուն վճարեին պահանջվող գումարը, և նրանք, առանց ավելորդ գլխացավանքի, կարող էին ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը[11]:

1847 թ. ամռան վերջերին տասնվեց տարին նոր թեւակոխած Հակոբը և իր ուղեկիցը արդեն Թիֆլիսում էին: Ըստ նախապես կայացված որոշման Հակոբը իր կրթությունը պետք է իրականացներ Ներսիսյան հոգևոր դպրոցում: Այդ նպատակադրումով էր նա Թիֆլիս եկել, սակայն տեղի է ունենում անսպասելին: 1847 թ. Ներսես կաթողիկոս Աշտարակեցին, ցանկանալով վերահասու լինել դպրոցում տիրող դրությանը, փետրվարի 5-ին հատուկ կոնդակով կյանքի է կոչում «կոմմիսիա վերազննության» անունով մի հանձնախումբ: Քննելով դպրոցի գործունեությունը, «կոմմիսիան» հայտնաբերում է «զեղծումներ և պակասություններ», ուստի պատրաստում է մի ընդարձակ զեկուցագիր և 1847 թ. ամռանը «քաղաքումս տարածված» խոլերայի պատճառով կաթողիկոս Ներսես Աշտարակեցու «բարեհաճությամբ» փակվում է Ներսիսյան դպրոցը և «արձակվում են թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչները»[12]:

Օգոստոսի վերջերին հասնելով Թիֆլիս և Ներսիսյան դպրոցի գռները փակ գտնելով Մելիք Միրզաբեկը և նրա որդի Հակոբը հայտնվում են երկընտրանքի առաջ: Վերջինս կամ պետք է վերադառնար Փայաջուկ և կամ՝ իր ուսումնառությունը իրականացներ մի այլ դպրոցում: Այդ ժամանակ Թիֆլիսում մեծ հռչակ ուներ մանկավարժ Կարապետ Բելախյանի դպրոցը: «Թիֆլիսում,– գրում է Պերճ Պռոշյանը,– հայագիտության հռչակը վայելում էին երկու վարժապետ, որոնք ո՛չ գիմնազիայի ուսուցիչներ էին և ո՛չ Ներսիսյան դպրոցի, այլ իրենց համար մասնավոր ուսումնարան էին պահում: Նրանցից առաջինը համարվում էր «Եգիպտացի մականվանյալ Կարապետ վարժապետ Բելախյանցը, իսկ երկրորդը՝ Հարություն Շահնազարյանցը»[13]:

Կարապետ Բելախյանը ծնվել էր Գանձակում, նախնական կրթությունը ստացել էր Կ. Պոլսում: Երկար ժամանակ վարժապետություն անելով Եգիպտոսում, կուտակել էր մանկավարժական հարուստ փորձ և գիտելիքներ: 1840-ական թվականների սկզբում գալով Թիֆլիս՝ ուսուցչի պաշտոն է վարում Էնֆիաճյանի դպրոցում, ապա 1846 թ. կաթողիկոս Ներսես Աշտարակեցու թույլտվությամբ Մողնու Ս. Գևորգ եկեղեցու մոտ, Քիփինովի տանը հիմնում է իր դիշերօթիկ վարժարանը: «Այդ այն ժամանակ էր,– մի առիթով պատմել է Ռաֆֆին Շիրվանզադեին,– երբ հայոց լեզուն աքսորված էր Թիֆլիսի հայոց ընտանիքներից, երբ հայ դպրոցներ չկային, որ այդ լեզուն ավանդեն, Կարապետ Բելախյանը տնից տուն էր ման դալիս՝ խնդրելով ծնողներին, որ իրենց զավակներին տան նրա ուսումնարանում կրթելու, հայերեն գրել-կարդալ սովորելու»[14]: Հակոբի հոր՝ Մելիք Միրզաբեկի ընտրությունը կանդ է առնում այդ դպրոցի վրա:

---

11 Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու. հ. V, էջ 64:

12 Ա լ ե ք ս ա ն դ ր Ե ր ի ց յ ա ն. Պատմություն 75–ամյա գոյությանը Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի. Թիֆլիս, 1898, էջ 437: Տե՛ս նաև Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի. Թիֆլիս, 1900, էջ 61:

13 Պ ե ր ճ Պ ռ ո շ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. VII, Երևան, 1964, էջ 133:

14 «Արձագանք», 1888, 6 նոյեմբերի, № 43, էջ 603:

Դիմորդը նախ պետք է վճարեր ուսման համար սահմանված վարձը, ինչը դժվարություն չէր ներկայացնում Մելիք Միրզարեկի համար, ապա պետք է ներկայացվեր համապատասխան փաստաթուղթ նրա ինքնության ու տարիքի վերաբերյալ: Ընդ որում իրրև պայման դիմորդը պետք է ունենար 9-ից ո՛չ ցածր և 12-ից ո՛չ բարձր տարիք, ինչը սահմանված էր Թիֆլիսի ռուսական գիմնազիայի դիրեկտորիայի կողմից և դպրոցի տնօրեն Կարապետ Բելախյանը խստությամբ պահպանում էր այդ օրենքը[15]:

Հանգես է գալիս անլուծելի թվացող խոչընդոտ: Եթե նրանք ներկայացնեին հյուպատոսից Թավրիզում վերցրած անցագիրը, թերևս նաև Առաջնորդարանից սացված ծննդյան վկայականը, ըստ որի Հակոբը 16 տարեկան է, այդ փաստաթուղթը ոչ միայն չէր գոհացնի Կարապետ Բելախյանին, այլև կարող էր խոչընդոտ դառնալ ընդունելության գործում: Ստեղծված կացության թելադրանքով փաստաթղթի փոխարեն տրվում է բանավոր հավաստիացում այն մասին, որ Հակոբը 12 տարեկան է[16]: Եվ քանի որ նա ըստ Բելախյանի կազմած ընութագրի «իր տարիքից փոքր երևացող մի վտիտ պատանի էր», ենթադրվող խոչընդոտը վերանում է, և վերջինս գրանցվում է նրա գպրոցում իրրև գիշերօթիկի սան:

Տեղավորվելով Կարապետ Բելախյանի դպրոցում, երիտասարդ Րաֆֆին առաջին անհրաժեշտ գիտելիքների հետ ձեռք է բերում մի շարք ծանոթություններ և ուրույն կարծիք այս նոր միջավայրի ու մարդկանց մասին: Նրա, տակավին անփորձ, բայց սրատես աչքը իսկույն նկատում է այն մեծ տարբերությունը, որ կար իր փայաջուկցի Մսեր վարժապետի և Կարապետ Բելախյանի միջև, մյուս կողմից, իր նոր վարժապետի մեջ Հակոբը տեսնում էր մարդկային լավ ու դրական բազում հատկանիշներ, ուստի ոչ միայն հարգում, այլև որդիական ջերմ սիրով կապվում է նրա հետ:

Կարապետ Բելախյանի գիշերօթիկը, ինչպես նշեցինք, գործում էր Թիֆլիսի ռուսական գիմնազիայի դիրեկտորիայի տնօրինության ներքո: Ըստ սահմանված կանոնադրության, առարկաների դասավանդմանը տրվում էր այնպիսի ընթացք, որ նախադիտելիքների հետ աշակերտը նախապատրաստված լինի Թիֆլիսի ռուսական գիմնազիայում ուսումը շարունակելու: Այդ իսկ պատճառով դպրոցի տնօրենը իր ուսումնական ծրագրերը համապատասխանեցնում է գիմնազիայում գործող կանոններին:

---

15 Ավելի ուշ այդ որոշման օրինականացումը կիրառվում է նաև Ներսիսյան դպրոց ընդունվողների նկատմամբ: Տե՛ս Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 63-64:

16 Պետք է ենթադրել, որ Բելախյանը չի առարկել Րաֆֆու տարիքը առանց փաստաթղթի 12 տարեկան համարելու հավաստիացմանը և քանի որ այդ ժամանակ Հակոբը եղել է թուլակազմ, հիվանդոտ աչքերով, իր տարիքից (12 տարեկանից) փոքր երևացող վտիտ կազմվածքով մի պատանի (տե՛ս «Նոր դար», 1888, 3 մայիսի, № 66, էջ 1), ուստի նրա այս կարգի մոտեցումը թեև դյուրացնում է երիտասարդ Րաֆֆու ուսումնառության գործում առաջ եկած խոչընդոտը, սակայն իրրև եղծված փաստարկ Բելախյանի այդ ընդառաջումը անջնջելի հետք է թողնում Րաֆֆու կենսագրության մեջ: Այս փոխհամաձայնեցված կարգավորման հետևանքով Րաֆֆու կենսագրության մեջ ծայր է առնում 1835 թ. նրա ծնված լինելու վարկածը, որն ավելի ուշ՝ 1888 թ. մայիսին, Րաֆֆու մահվան առիթով Կարապետ Բելախյանի «Նոր դար» լրագրում հրապարակած հոդվածի հիման վրա (տե՛ս «Նոր դար», 1888, 4 մայիսի, № 67) վեր է ածվում փաստականի և ամրագրվում է Րաֆֆու կենսագրության մեջ իրրև նրա ծննդյան «ամենաստույգ թվական»:

Հակոբը իր «խոնարհ բնավորությամբ, մտավոր ունակությամբ ու ջանասիրությամբ» շատ չանցած գառնում է դպրոցի առաջին աշակերտը և գրավում է Կարապետ վարժապետի ուշադրությունն ու համակրանքը: Աշակերտը Բելախյան գիշերօթիկում սովորում էր երկուսից չորս, երբեմն նույնիսկ հինգ տարի, նայած թե ինչ միջավայրից էր եկել նա և ինչ չափով էր տիրապետում ռուսաց լեզվին:

Գիմնազիայում, բացի հայոց լեզվից և կրոնից, մնացած առարկաները ավանդվում էին ռուսերեն, այնպես որ Բելախյանի դպրոցը ավարտող աշակերտը լեզվի իմացությամբ ու գիտելիքների ընդհանուր պաշարով պետք է կարողանար բավարարել գիմնազիա ընդունվողի համար առաջադրվող պահանջներին: Փայաջուկից Թիֆլիս եկած Հակոբը գիտեր միայն հայերեն, խոսում էր Սալմաստի բարբառով և փոքր ինչ թուրքերեն, ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու նա երկուսի փոխարեն Բելախյանի գիշերօթիկում մնում է հինգ տարի[17]:

Կարապետ Բելախյանն իր վարժարանի սաներին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելուց բացի նրանց կրթություն տալիս էր հայագիտական թեքում, վարժեցնում էր գրաբարի ու հայկաբանության մեջ: Վարժապետի հայրենասիրական գաղափարներն ու հայագիտական մղումները պարարտ հող են գտնում երիտասարդ Հակոբի ուսումնածարավ հոգում: Տիրապետելով գրաբարին, Հակոբը եռանդով ու հափշտակությամբ սկսում է կարդալ հայ մատենագիրներին: Հայ դրականությանը զուգընթաց նա տարվում է հունա-հռոմեական դրականությամբ: Հափշտակությամբ կարդում է Մխիթարյանների հրատարակած Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը», Միլտոնի «Դրախտ կորուսյալը», Ֆենելոնի «Տելեմաքոսը», Պեսների «Մահն Աբելի» ստեղծագործությունները և բազում այլ գործեր: Նա անգիր դիտեր ամբողջական հատվածներ «Էնեականից» ու «Ոդիսականից» և ոգևորությամբ արտասանում էր հանդիսավոր առիթներով: Ուսումնառության չրջանում Հակոբը հմայվում է նաև հունա-հռոմեական դիցաբանությամբ: Այդ սերը երկար է գոյատևում փայաջուկցի մտավորականի

---

17 Ռաֆֆու ուսումնառության ընթացքը պարզաբանելու նպատակով հարկ ենք համարում մեջբերել Կ. Բելախյանի դպրոցում Ռաֆֆու ստացած կրթության ուրվագիծը ըստ տարիների.

1.	1847 թ. սեպտեմբեր–դեկտեմբեր 1848 թ. հունվար–մայիս	առաջին ուս. տարի
2.	1848 թ. սեպտեմբեր–դեկտեմբեր 1849 թ. հունվար–մայիս	երկրորդ ուս. տարի
3.	1849 թ. սեպտեմբեր–դեկտեմբեր 1850 թ. հունվար–մայիս	երրորդ ուս. տարի
4.	1850 թ. սեպտեմբեր–դեկտեմբեր 1851 թ. հունվար–մայիս	չորրորդ ուս. տարի
5.	1851 թ. սեպտեմբեր–դեկտեմբեր 1852 թ. հունվար–մայիս	հինգերորդ ուս. տարի

ռոմանտիկ հոգում և իր կնիքն է թողնում նրա ստեղծագործական աշխարհի վրա: Վաղ շրջանում հղացած ու իրականացված գործերի մեջ Ռաֆֆին լայն տեղ է հատկացնում գիցաբանական անուններին, համեմատություններին ու զուգահեռներին:

Բազմակողմանի ընդունակությունների, խոհեմ վարքի ու գիտելիքների շնորհիվ Ռաֆֆին ձեռք է բերում վարժապետի մտերիմը դառնալու իրավունքը: Կարապետ Բելախյանը, անշուշտ, շատ բան կարող էր պատմել իր աստանդական կյանքից, շրջագայած երկրներում տեսած ու հանգիպած պանդուխտ հայերի մասին, որոնք պետք է արժանանային իր փայաջուկցի սանի ուշադրությանն ու հարցասիրությանը, ապա նաև առիթ տային խորհելու օտար ափերում դեգերող իր հայրենակիցների մասին: Բելախյանի միջոցով Ռաֆֆին բարեկամություն է հաստատում Թիֆլիսում լույս տեսնող «Արարատ» ամսագրի խմբագիր, հայագետ Գաբրիել Պատկանյանի հետ: Կարճատև կյանք ունեցած ամսագրի խմբագիրը նրան պետք է ծանոթացներ ժողովրդի լուսավորության ու ազգի դաստիարակության գործի առջև ծառացած խնդիրների գպրոցի, գրականության, մամուլի ու աշխարհաբար լեզվի դերի ու կարևոր նշանակության հետ: Գաբրիել Պատկանյանի օգնությամբ նա պետք է փորձեր հասկանալ այն տարբերությունը, որ կար ռուս աշխատավոր ժողովրդի, նրա առաջավոր մտավորականության ազնիվ ու մարդկային ձգտումների և ցարիզմի բյուրոկրատական վարչակարգի ու ապազգայնացման ձգտող քաղաքականության միջև: Իր վարժապետի միջոցով Ռաֆֆին ծանոթություն ու մտերմություն է հաստատում նաև գիմնազիայի նախապատրաստական դասընթացի ազատ ունկնդիրների վերակացու, աշտարակեցի Հովհաննես Տեր-Հովսեփյանցի և շատ ու շատ ուրիշների հետ:

Ահա այսպիսի միջավայրում էր հասակ առնում, կազմավորվում ու ապագայի բեղմնավոր ծիլեր արձակելու համար անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերում Հակոբը իր ուսումնառության բելախյանական տարիների ընթացքում:

Չնայած աչքերի տկարությանը՝ մի քանի տարվա ընթացքում Հակոբը ցույց է տալիս մեծ ու խոստումնալից առաջադիմություն: Այդպիսի դեպքում հենց որ ուսումնառուն քիչ թե շատ ընդունակ էր երևում, Բելախյանը անմիջապես սկսում էր համոզել նրա ծնողներին, ազգականներին կամ որևիցե բարերարի, որ այդ խոստումնալից ուսումնառուին ուղարկեն Մոսկվա՝ Լազարյան Ճեմարանում կրթությունը շարունակելու համար:

Խանդավառված իր սանի անձով, նրա ընդունակությամբ ու գիտելիքների պաշարով, Բելախյանը ջանում էր երիտասարդի գործունեությունը դնել այնպիսի ուղու վրա, որ գիմնազիան ավարտելուց հետո կարողանա արքունի ծախքով ուսումը շարունակել Մոսկվայում, որպեսզի հետո մտնի դիվանագիտական ծառայության մեջ և օգտակար դառնա իր ժողովրդին: Նման մտադրությունն իրականացնելու համար ինչպես ռուսական գիմնազիա ընդունվել ցանկացողը, այնպես էլ արքունի ծախքով Մոսկվայում սովորել ակնկալողը ընդունակությունից բացի, պետք է ուներ նաև ազնվական ծագում, ինչը տվյալ ժամանակաշրջանում խիստ

կարևոր էր բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու համար: Անհրաժեշտ ենք համարում հայտնի դարձնել, որ փայաջուկցի Հակոբը ուներ և՛ Մոսկվայում սովորելու ցանկություն, և՛ նման արտոնությունից օգտվելու իրավունք: Այս ամենը ավելի առարկայական է դառնում, երբ գիշերօթիկում ավարտին է մոտենում Հակոբի ուսումնառությունը և օրվա հարց է դառնում գիմնազիա ընդունվելու խնդիրը: Հեռուն գնացող իր ծրագիրը իրականացնելու նպատակով Բելախյանը 1851 թ. վերջերին մի նամակով դիմում է Հակոբի հորը՝ Մելիք Միրզաբեկին և հանձնարարում է նախ Թիֆլիս ուղարկել Հակոբի տարիքը փաստարկող ծննդյան վկայական, գիմնազիայում ընդունելությունը իրականացնելու համար[18], և ապա ձեռք բերել նրա ազնվական ծագումը վավերացնող փաստաթուղթ, ինչը խիստ կարևոր էր ոչ միայն գիմնազիա ներկայացնելու, այլև Մոսկվայում նրա ուսման շարունակությունը ապահովելու համար: Մելիք Միրզաբեկը, ոչ առանց դժվարության, պարսից արքունիքից ձեռք է բերում պահանջվող փաստաթղթերը, վավերացնել է տալիս Թավրիզում թադաժառանգ Համզա Միրզայի միջոցով և ուղարկում է Թիֆլիս՝ Կարապետ Բելախյանին: Ստացված փաստաթղթերի հիմնավորումով Ռաֆֆին ձեռք է բերում Մելիք-Հակոբյան տիտղոսավոր ազգանունը և քանի որ վայելում էր գիմնազիայի նախապատրաստական դասընթացի վերակացու Հովհաննես Տեր-Հովսեփյանցի մտերմությունը՝ վերջինիս միջնորդությամբ 1852 թ. երկրորդ կեսին, հանձնելով պահանջվող քննությունները, ընդունվում է Թիֆլիսի ռուսական գիմնազիայի նախապատրաստական բաժինը որպես ազատ ունկնդիր:

1852 թ. վերջերին ներկայացնելով տարիքի ու ազնվական իրավունքի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր և հանձնելով պահանջվող քննությունները, Ռաֆֆին իրավունք է ստանում 1853 թ. հունվարից ուսանել գիմնազիայի չորրորդ դասարանում իբրև ազատ ունկնդիր:

Ընդունվելով գիմնազիա՝ Հակոբը ոչ միայն իր կապերը չի խզում Բելախյանի հետ, այլև մնում է նրա գիշերօթիկում և շարունակում է զուգահեռ ուսումնառությունը լիուլի յուրացնելով տարիների ընթացքում իր վարժապետի կուտակած փորձն ու գիտելիքները:

1857 թ. Ռաֆֆին պետք է ավարտեր գիմնազիայի լրիվ դասընթացը, որից հետո նա նպատակ ուներ մեկնել Մոսկվա՝ կրթությունը շարունակելու, սակայն 1856 թ. հոր՝ Մելիք Միրզաբեկի պահանջով ստիպված է լինում կիսատ թողնել կրթությունը և տարվա կեսերին մեկնել Պարսկաստան:

---

18 Տե՛ս «Նոր դար», 1888, 26 սեպտեմբերի, № 174: Այդ նշանակում է, որ 1847 թ. ամռանը գիշերօթիկում ընդունվելու ժամանակ Մելիք Միրզաբեկը Հակոբի ծննդյան թվականը փաստարկող վկայականը չի հանձնել Բելախյանին, այլապես նա նորը չէր խնդրի: Մյուս կողմից, այդ նախորդ վկայականը, տվյալ դեպքում տարիքի անհամապատասխանության պատճառով չէր կարող ներկայացվել գիմնազիա, որովհետև այնտեղ ընդունվողը պետք է ունենար 12-ից ոչ ցածր և 15-ից ոչ բարձր տարիք. մինչդեռ 1852 թվականին Ռաֆֆին 20 տարեկան էր: